


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ
Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ
Կրկն քիւ ձեկ ծարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԿԱ
Տարեկան 2,60 Տոյա
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ Ի ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

ТАКЦИЈА

Michitaris

Vienne

ВАРНА

Գրութիւնք եւ

չեմ տրոշիր

Ծրանշման տուր
20 շաբաթ

ԿԸ ԽՆԴՐՈՒՄ ԻՄ ԳՈՐԾԱԿԱՆԻՔԷ՛
Բարեկամներէ ու բաժանորդներէ որ
հաճին գրեւորու, ծախուած լրագիրնե-
րու եւ բաժնեկիցիներու հաշիւները
փութով զրկել մեզ :

ՍԵՐ ԱՌԱՋԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Պօլսոյ թերթերուն մէջ կը
կարդանք թէ Տ. Վահան Վրդ.
Յակոբեան առաջնորդական ընտ-
րութեան արդիւնքէն դժգոհ
մնացած է, և «իր այդ զգացու-
մը հաղորդած է մինչեւ իսկ
Պատրիարքարանի» :

Այո՛, հանրային գործերու մէջ
քծնումներով և կեղծաւորութիւն-
ներով ժողովրդականութիւնը չա-
հիլ փորձողներուն վերջին զգա-
ցումը պէտք է ըլլայ դժգոհու-
թիւն և զղում. Տ. Վահան Վրդ.
հիմակ կը զգայ անշուշտ թէ,
տարեքով իրմէ շատ պզտիկ,
բայց ազատ երկիրներու մէջ
տիրող հանգամանքներուն փոր-
ձառու երիտասարդի մը անկեղ-
ծօրէն իրեն ըրած յաշիկ դիտու-
թիւնները որչափ խրատական
էին. նա կը յիշէ անշուշտ, պատ-
գամաւորի քուէ մը աւելի չահե-
լու համար, Վառնայի մէջ գոր-
ծած մեծագոյն սխալը, կառա-
վարութեան միջամտութիւնը
հրաւիրելը լոկ եկեղեցական
գործի մը մէջ. նա համոզուած
է անշուշտ թէ այդ միջամտու-
թեան շնորհիւ իր սակարկած
պատգամաւորին ընտրութիւնը
թէեւ ապահոված եղաւ, բայց
միւս կողմէ գրեթէ ամբողջ պուլ-
կարահայոց զգուանքին արժանա-
ցաւ : Տ. Վահան Վրդ. իր ամեն
վարպետութիւններուն հակառակ
Պուլկարիոյ առաջնորդութիւնը
կորսնցնելուն պատճառաւ թէեւ
դժգոհ, բայց, պաղարիւնու-
թեամբ եթէ մտածէ, պէտք է
շատ քիչ ըլլայ որ Պուլկարահա-
յերը վերջապէս գիտցան կեղծի-
քի, շղթարողութեան և քծնու-
մերու չը խաբուել ու իրմէ ար.
ժանաւորագոյն մէկը իրենց ա-
ռաջնորդ ընտրել :

* Խնդրուած է Պատրիարքա-
րանէ որ Տ. Ներսէս Եպիսկոպոս
իր նոր պաշտօնատեղին գոյ ան-
յապաղ. որովհետեւ Սօպրանիէի
բացումէն կամ իշխանապետու-
թեան ելեւմուտքի ծրագիրը
որոշուելէ առաջ, հարկ է մեր ա-
ռաջնորդարանի տարեկան ծախ-
քին համար գումար մը նշանա-
կել տալ նախարարութեան ծա-
խուց ցուցակին մէջ :

Սօֆիայէ Պատրիարքարանի
ուղղուած այս խնդրանքը ցոյց
կուտայ թէ՛ Տ. Վահան Վրդ. ընտ-
րութեան արդիւնքէն վշտաբեկ,
էն կարեւոր նկատուած գործ մը
իսկ կարգադրելու սիրտ չունի :
Մինչդեռ Պատգամ. Ժողովոյ գու-
մարումէն առաջ, իր այս ու այն
քաղաքը պտտած ատեն, պարծե-
նալու չնշտով մը նախարարա-
պետին հետ բարեկամութիւն մը-
չակած և Հայոց առաջնորդարա-
նին ծախքին համար 4-5000 ֆր.
ի չափ գումար մը յատկացնելու
խոստում առած ըլլալը կը խօսէր
օրը քանի մը անգամ, Ուր մնա-
ցին այդ բարեկամութիւնները և
խոստումները. ինչպէս ատենցմէ
օր առաջ օգտուելու չը հետե-
ւիր, մանաւանդ երբ պուլկար
կառավարութիւնը դէպի հայերս
լաւ տրամադրութիւններ ունի :

Միւս կողմէ փորձով գիտենք
թէ նորընտիր առաջնորդին
Պոլսէն մեկնելը քանի մը օրուան
մէջ կարելի չէ, որովհետեւ
թուրք կառավարութենէն թոյլ-
տուութիւն ստանալու գործողու-
թիւնները ամիսներու կը կարօ-
տին. ամիսներ անցնելէ վերջ
ա՛լ անբողջ տարուտն մը համար
իշխանապետութենէն ու եւ գու-
մար ստանալ անկարելի կըլլայ,
նախարարութիւնը իր ելեւմուտ-
քի ծրագիրը արդէն Սօպրանի-
էին ներկայացուած ըլլալով :

Հետեւաբար Հայոց կողմէ պաշ-
տօնապէս նախարարութեան դի-
մում ընելու եւ արդիւնք ձեռք
բերելու յարմարագոյն առիթը
հիմակ է : Տ. Վահան Վրդ. պատ-
պէտք է մշուի և ամեն պարագայի
մէջ ջանայ ապահովել բաւակա-
նաչափ գումարի մը սահմանումը :

կառավարութենէն առանց ա-
տոր, գէթ տարուան մը համար
Պուլկարիոյ առաջնորդութիւնը
ոչ մէկ ապահովութիւն չը ներ-
շնչէր. քանի որ հայաբնակ տա-
սը քաղաքները նախատեսուած
ծախքին հաշիւ կէսը հայթաթել
խոստացած են, այն ալ դեռ միայն
խոստում է :

Պատր. Փոխանորդը Պուլկարիոյ
մէջ եթէ գործ մը տեսած ըլ-
լալու պարծանքը պիտի ունե-
նայ, այդ ալ միայն այս գործն
է, առանց որոյ «բազում աշխա-
տեցաւ և ոչինչ կալաւ» :

ՆԱԶԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԿԱՆՈՒՄՆԵՐՈՒՆ ԽՆԴԻՐԸ

ՏՓՂԻՍ 25 հոկտ.

Քանի մը շաբաթէ իվեր ձեզ
չգրեցի. Պատճառը նիւթոյ պա-
կասութիւնը չէ, Ընդհակառակն,
Սակայն իրարու յաջորդող
դէպքերը այնչափ իրար կը գե-
րազանցեն իրենց գարշիլիու-
թեամբը, որ ինչ ինչ վայրկեան,
ներու մէջ այլեւս անզօր կզգաս
ինքզինքնիդ թուղթին յանձնե-
լու այնպիսի զգուելի իրողութիւն
ներ որոնցմէ թուղթն իսկ պի-
տի կարմրէր Բայց կան մանրամաս
նութիւններ զորս պէտքէ ծանօ-
թացնել ընդհանուրին. կարծէ
որ անոնք արձանագրուին քա-
ներորդ դարու պատմութեան
մէջ, անոնք մեր «յառաջդի մու-
թեան դարուն» հազուագիւտ
գոհարներն պիտի համարուին :

Մեր եկեղեցւոյ գոյքերը գրա-
ւելու կոչուած պաշտօնեաները
ասկէ ամիս մը առաջ ներկայա-
ցան Կաթողիկոսին և խնդրեցին
Կաթողիկոսարանի գոյքերուն
ցուցակը իրենց յանձնել : Պատ-
կառելի ծերունին որ վշտին մէջ
երիտասարդած կերեւի, հետեւ-
եալ գեղեցիկ պատասխանը ա-
նոնց տուաւ :

«Այս գոյքերը իմն չեն, անոնք
Հայ Ժողովուրդին կը վերաբե-
րին. զանոնք Ձարը չէ ընծայած

Հայերուն. անոնք Հայաստանի
հին թագաւորներուն և պարսիկ
վեհապետներու ընծաներն են,
ամեն երկիրներու հարուստ հա-
յերէ նուիրուած և ուխտաւորնե-
րէ ընծայուած են, ես իրաւունք
չունիմ Ձարին յանձնելու այն
բաները զորս իրմէ չեմ ստացած, »
Յետոյ Ռուսական պատուանշանն
ըր ցոյց տալով աւելցուց. «Ահա-
ւասիկ միայն ասոնք Ձարէն ըն-
դունած եմ. կրնաք զանոնք ետ
առնել, »

Պաշտօնեաները դիտել տուին
թէ Կաթողիկոսը Կայսեր հրամա-
նին դէմ բռնած այդ անհնազանդ-
ընթացքովը կը դրժէ այն եր-
գումը զոր ըրած է էջմիածնայ
գահը բարձրացած ասին, հաւա-
տարիմ մնալու իր վեհապետին
և հնազանդելու անոր բոլոր հրա-
մաններուն : «Այդ երգումը ը-
նելէս առաջ, երգում մը ըրած
էի իմ տիրոջ Աստուծոյ, ոտը
եկեղեցիին և իմ սիրեցեալ Ժո-
ղովուրդիս. այս է իմ գլխաւոր
ուխտս, կեանքիս նուիրական եր-
գումը. ինձ անկարելի է այս
ուխտս դրժել հնազանդելու հա-
մար հրամանի մը որ կը ձգտի
հիմէն կործանել հայկական եկե-
ղեցին և ոտքի տակ կառնէ այն
հանգիստաւորութեամբը, որ նոյնին
քն Ձարը ըրած է ամբողջ պահ-
պանելու հայկական եկեղեցւոյ
բոլոր իրաւունքները, յարգուած
և նուիրագործուած իր նախնիք-
ներէն : »

Պաշտօնեաները նորէն կուգան
երկրորդ օրը գողերու յատուկ
գործիքներ հետեւնին, կեղծ
բանալիով կը բանան գանձաբա-
նին դռները, կը խորտակեն
գրամարկը, ուր կը գտնեն Դէ-
որդեան ձեւաբանի գրամագլու-
խը, կէս միլիոն բուլղարի չափ
գումար մը գրեթէ : Կը վերցու-
նեն կը տանին արկղը իր պա-
րունակութեամբը միատեղ :

Այս խայտառակ գործողութեան
ժամանակ, Կաթողիկոսը որ վե-
րին յարկը կը գտնուէր, ազ-
մուկը կը լսէ, կը հասկնայ ան-
ցածը, և ցաւէն ու կատաղութե-
նէն զայրացած կը ձգէ կեղծ
էջմիածնի վարքէն և Գայիան

եանց վարքը կերթայ, որպէսզի պաշտօնական գործուն սրբապիղծ աշխատանքին չարաչաք աղտոտուի :

Կէս ժամէն ետքը կը վերադառնայ կարծելով թէ գործողութիւնը լմնցած է . սակայն չէր, և վաղը պաշտօնող զինուորականները տմարդութեամբ կարգիլն անոր ներս մտնել, հետեւաբար կ'ստիպուի նորէն Գոյնիանեանց վանքը մտնել : Գոյնու-թիւնը կատարելէ ետքը, պաշտօնականներէն մէկը կաթողիկոսին քովը կերթայ, և ներսէն կը խնդրէ զինուորաց անվայել ընթացքին մասին . «հրաման ունէին, կըսէ, ոչ ոքի թաղ տալ ներս մտնել, և չճանչցան Ձեր Սրբապետութիւնը» : Ապա անոր կը յանձնէ ռուսական պատուանշանները զոր արկղին մէջ գտած էին, կարծելով թէ կաթողիկոսը զանաք հոն մուցած էր անըզգուշութեամբ : «Ո՛չ, ո՛չ» պահէ անոնք, կը պատասխանէ կաթողիկոսը, որովհետեւ որք ժողովուրդեան մը ստացուածքը կը կապուէին իրմէ, տարէք այս առարկաներն ալ, վաճառականական արժէք մը ունին :

Այս վիպական գործողութեան յաջորդող երեք օրերուն մէջ, երեւանի բոլոր խանութները գոյուած մնացին ի նշան սգոյ : Նոյն գործողութիւնները կատարուեցան Տփղիսի մէջ : Պաշտօնականները նախ եկան խնդրեցին մեր առաջնորդէն որ իրենց աշակցի Տփղիսի Հայոց եկեղեցական ստացուածքներուն ցուցակը պատրաստելու Առաջնորդը մերժեց : Պաշտօնականները երկու օր յետոյ կրկին եկան դարբնի մը ընկերակցութեամբ, և դըլուս հանեցին իրենց վատ գործը :

Այս բոլորը իշխան Կալիցինի գործն է, այս տխրահուշ մարդուն անունը անիծելով պիտի ըլլայ ոչ թէ միայն Հայոց կողմէ, այլ լուսաւորեալ բոլոր Ռուսներէն ալ : Արդէն ես հաղորդեցի Խոսթէնի ընթերցողներուն արգարադատ ռուս հայրենասէրներէն ոմանց կարծիքները, որոնք կը ներշնչեն Ռուսիոյ շահերուն և արժանապատուութեան դէմ իշխան Կալիցինի որչափ ապուշ նոյնչափ անարգ ընթացքին պատճառաւ : Այս օրերս պատահած գէպը մըն ալ կուգայ անգամ մը եւս ապացուցանել թէ ռուսական Հայաստանի փոքրիկ կէտէրը բոլոր Ռուսներուն համակրելի ըլլալէ հետո ինչ :

Տփղիսի ժիմնաղին ռուս աշակերտները սրտած էին այլ եւս չը բարեւել իշխան Կալիցինը երբ սա փողոցը իրենց հանդիպէր (ըստ օրինակի հայ աշակերտաց որոնք վերջին գէպերէն իվեր զանի բարեւել չէն ուզեր) : Իշխանը կատարած կանչել

կուտայ ժիմնաղի անօրէնը և անոր կը հարցնէ թէ ինչո՞ւ ռուս աշակերտները զինքը չեն բարեւել : Տնօրէնը, չը գիտնալով թէ ինչպէս պատասխանէ, կըսէ թէ աշակերտները դեռ փոքր ըլլալով անճնապէս իշխանը չեն ճանչնար : սա կը հրամայէ այն ատեն Տնօրէնին իր պատկերը ժիմնաղի մուտքին ճակատի պատին վրայ դնելու, որպէսզի աշակերտները կարենան զանի ճանչնալ փողոցներուն մէջ : Հըրամանը կը գործարքուի : Բայց աշակերտները կը զայրանան որ ամեն օր դպրոց մտնալուն ատիպուած ըլլան տեսնելու դէմքը մարդու մը զոր փառակար կը դատեն իրենց հայրենիքի, շահերուն և համբաւին, ու բաւական օրինակելի միջոց մը կը գտնեն ինքզինքնին աշատելու այդ զգուշ ինքնութեան : Գիշեր մը պատկերը պատէն կը հանեն, արտաքին կը տանին, գարշալութեամբ կազմուտեն, և պատին վրայ կը դրեն ՔՈՒ ՏԵՂԻ ՀԱՍԻ :

Տարածայնութիւն կայ թէ իշխանը բարձրագոյն կարգի աշակերտները արտաքին պիտի տայ, եւ թողութիւն թէ այդ գործը անոնք ըրած են : Այս ալ ահա անարդար և կամայական միջոց մըն է որովհետեւ գաղտնիքը շատ լաւ պահուած և ոչ ոք չը գիտեր թէ որոնք են ժիմնաղի 150 աշակերտներէն այն քով պատանիները որոնք այդ արդար գործին նախաձեռնարկ եղան, որ թէեւ հաճախի բան մը չէ, բայց բոլորովին ներգաշակ է այդ առաջակապտին աղտոտ հոգիին :

Խոսթէնի

ՀԱՅ ՄԱՐԴԱՍՊԱՆՆԵՐ



(«Թայմըզ»ի մէջ կը կարդանք.)
Լոնտոնի հարաւային արեւելիան մասին զեպոնիքը այսօր քննութիւն մը պիտի կատարէ երեք Հայերու գիտկաներուն վրայ, որ Ս. Կեօքքի զեպոնիքին մէջ կը գտնուին :

Սփիւր և պարագաները հեպոգոտող ոստիկանական պաշտօնականները, չկրցին ճշգրտել այն մարդասպանին անունը որ բեքլամ-բայի մէջ կրկին հնչակեաններն սպաննեց և ապա ինքզինքը կրկին օր այս կարգապահը չի կրնար նոյնացուել անոր հետ որ հոկտեմբեր 26 ին Սաղունի վրայ յարձակեցաւ :

Կըսուի թէ հայերէն մէկը որ երկուշաբթի օր կանգնած էր վկայութիւն տալ զեպոնիքի դատաւորին առջեւ իրեն կենաց դէմ սպաննացող նամակ մը ընդունեցաւ, իմէ ներկայ գտնուէր քննութեան :

Հետեւաբար զեպոնիքի դատաւորը հրամաններ տուաւ որպէս զի քննութեան ժամանակ դատարանին մէջ թոյլ տրուին միայն վկաները և պաշտօնականները :

Հնչակեանները Հինգշաբթի օրը Բեքլամի մէջ պատկերակազմող ունէին և թէեւ անոնք չուզեցին իրենց բանակցութեանց արկունքն հաղորդել

սակայն բոլորովին կը մերժեն Արֆարիտներու այն կարծիքը, թէ իրենց սպանուած պեար Սաղունին, ունէ կերպով մատ ունէր նախորդ սպաննութեանց մէջ : Անոնք կը յայտարարեն որ իրենց կուսակցութիւնը նիւթական զօրութեան զիմող չէ, այլ պարզապէս թախանձանօք կը ջանայ ստանալ իր հայրենակցաց վիճակին լարուածքը : Բէքլամի բնակիչներուն աչքին թէ Արֆարիտները և թէ Հնչակեանները, երկուքն ալ կը նկատուին իրր յայտարար և գործարք գրգռում մը կը տնջէ մէջերին զանոնք երկրին արտաքին ստալու համար միջոցներ ձեռք առնելու :

Նամակ թայմըզի հրատարակչին

Տիար — Թայմըզ ինձ որպէսզի «Տի Մէյլ»-ի միջոցաւ ներքին գործոց նախարարին ուղարկութիւնը հրաւիրեմ գործելու անձակ կացութեան վրայ Լոնտոնի հարաւարեւելիան մէկ արտաքին մէջ, Կանի մը ամիսներէ ի վեր խոմ մը Հայեր կը բնակին Բեքլամ-Բայի մօտերը : Վերջին ժողովներ ունեցան, և արեւմտահեղ շփոթութիւններ ծագեցան մէջերին : Երթաւու կողմ մը հրատարակուեցաւ երկու կուսակցութեանց միջեւ, որուն իրր հետեւութիւն Հայ մը սպաննուեցաւ Հոկտեմբեր 26-ին և ուրիշ երկուք ալ նոյնիման 4-ին : Ինձ վրա առնացնին որ ուրիշ սպանութիւններ ալ կ'ապագուին, զի—պաղարկեալութեամբ խօսող Հայու մը ըսածին նայելով—այս միջոցը ընտրած են անոնք իրենց հակառակորդները «մէջ»-տեղէն վերցնելու համար :

Այս եղբարկան գէպերու երեսն սարսափը տրեւած է թողին մէջ, և մերձակայց պատուարը բնակիչները կը հարցունեն թէ ինչ միջոցներ ձեռք առին ներքին գործոց նախարարը և ոստիկանութիւնը այս ոճիւրներու կրկնութիւն արգելելու համար :

Կրկնակի Մարդասպանը ինքնասպան եղաւ երբ տեսաւ որ փախուստ անկարելի էր : Բայց անտարակոյս գործակցներ ունէր, որովհետեւ ուղանութիւնէն առաջ տեսնուածէր անոր Հայերու հետ խօսակցելը երբ իր զոհերուն կ'ապագէր :

Ոստիկանութիւնը գիտէ այս մարդոց յաճախած տեղերը Բեքլամ-Բայի և Խոսթէնի մէջ : ամենայն իրաւամբ կրնանք ենթադրել որ անոնք յեղափոխականներ են, և իրենց ժողովները վերջացան երեք սպանութիւններով : Միթէ չկ'այ բնաւ օրէնք մը, որոյ գործութեամբ արտաքինին այս եղբուն որպէսզի աղաւթնք այս «անսխորտ» հիւրերէն», որք անարժան կացոյցին զերեւ Մեծին Բրիտանիոյ կողմանէ ուրիշ երկրներու հարաւահարեւմտեան շնորհած ապաստանին :

Ոստիկանութիւնը այնչափ անզօր կերեւայ այս հասարակաց վտանգին դէմն առնելու, որ պարտաւորեցայ «Թայմըզ»ին զիմելու, որպէսզի ներքին գործոց նախարարը որոշէ թէ ինչ միջոցներ պէտք է ձեռք առնուին մեր թաղեցիկները պաշտպանելու համար :

Մեր թեմակիւ մը

ԲԵՔԼԱՄ-ԲԱՅ Նոյ 6

ԱՆՏԵՂԻ ԴԱՏ ՍԵ

Թերթիս յարգելի պատասխանատու Տ. Ն. ԺՐԱԿՈՒԼԵՎԻ դէմ դատ մը բացուած է պ. Պետրոս Գալֆանի կողմէ : այս դատին առիթ տուած է Իրաւունքի ներկայ տարւոյ 61 թիւին մէջ արտասպանուած պաշտօնական նամակի մը մէկ մասը, որով ասուն մը Հին Հնչակեան կեդրոնը վարող Սաղուն-Գիւլիանը ծանր ամբաստանութիւն մը կընէր պ. Գալֆանի դէմ : և կը պատուրէր բոլոր Հնչակեան լիկեներուն զանի աղապէս ճանչնալու անցնելու :

Այս անցնելու պատուէրը գործադրելու նախաձեռնողութեամբ, Հին Հնչակեան մը պաշտօնական այն նամակը մեզ բերած և իր պատասխանատուութեան սակ նամակին այդ մասը հրատարակել խնդրած էր Մենք գործադրեցինք այդ խնդրանքը այն նախաձեռնողութեամբ որ այդ առիթով իմէ նամակի պարունակութիւնը զրպարտութիւն է, զրպարտիչը եմէ իրողութիւն է, ամբաստանաւոր, վերջապէս մէկին մէկը, իրը հայ յեղափոխութեան անպատուարկ անհատ գործաւ առնուի Հնչակեան շարքերէն :

Մենք այդ հրատարակութեամբ մեր կողմէ ոչ ոք չէինք ամբաստանիր, ոչ ալ այդ հրատարակումը խնդրող անձը իր կողմէ բան մը կը յօրինէր : հետեւաբար այդ ամբաստանութեան խնդրը ճշգրտեւ գործը ըստ օրինի և ըստ խղճի կը մնար պ. Գալֆանի և Սաղուն-Գիւլիանի միջեւ : Բայց մեր զարմանքը մեծ եղաւ երբ իմացանք թէ պ. Գալֆանի զինք ամբաստանողը մէկ կողմ թողելով, ելած է «Իրաւունք»ի պատասխանատու օտարազգի հայաստէրի մը դէմ դատ բանալու :

Ենթադրենք թէ այդ նամակը «Իրաւունք»ի մէջ հրատարակուած ըլլալուն համար մեր պատասխանատուութեան կան օրէնքին մէկ տրամադրութեամբ բանադրութեան կամ տուգանքի դատապարտուի, ասով Գալֆանի այդ պաշտօնական նամակի ամբաստանութիւնէն բան մը պակեցուցած չի կըրնար ըլլալ, այլ ընդհակառակը, հանրութեան ցոյց տուած կըլլայ թէ նա զինք անբաստանողի, տնտեսաբանողի օձիքէն ուղղակի բռնելու քաջութիւն չունենալով երեւոյթ մասամբ փրկելու համար օրէնքէն մէկ յօդուածը չարաչաք գործել կուզէ ասանց ինքզինք կարենալ սքեցելու :

Ուստի մենք խորհուրդ կուտանք Պ. Գալֆանիին —նոյն խորհուրդը տալու են իր բոլոր անկեղծ բարեկամներն ալ—որ այս տեսակ անխառն և անպատուարկ դատէ մը են կենայ ու զիմէ միմիայն զինք անբաստանող Սաղուն Գիւլիանի և անոր օձիքը բռնէ : Այս է միակ միջոցը ինքզինքը այդ ամբաստանութիւնէն փրկելու համար հայ ժողովուրդի առջեւ :

Երկու եզրերէն մէկը, կամ անբաստանութիւնը ճիշդ պէտք է ընդունիլ, որուն շատ հաւատք չենք ընծայեր, և կամ Սաղուն Գիւլիանը ստոր զրպարտիչ մը ու կուսակցութեանը պահ մը իրեն յանձնած կեդրոնը վարելու պաշտօնը չարաչաք գործածող մը : մենք աւելի այս երկրորդին կը հաւատանք : Բայց սակայն զրաւանդին հաստատելու և ինքզինք մաքրելու գործը ուղղակի Պ. Գալֆանիին կիւնայ որ փոխանակ օտարի դուռները դարնելու, պարտաւոր է ուղղակի Սաղուն Գիւլիանի օձիքը բռնել, դատուիլ ունէ ատենի առջեւ և վճիռը յայտարարել տալ թէ երկուքն ո՞րն իրաւ ինչպէս է յանցանքը :

Ահա խնդրը, որ օտարազգի մը դէմ դատ բանալով չը լուծուի բնաւ :

ԹԱՏՐՈՆԸ



Ուրախ ենք որ ՆՊՏԷԺՏԱ խումբը Տիար Է. Տիկին Յակոբեանի ժամանումէն օգտուելով, այսինքն բաւական վտրձ գերաստիւններ մը կարեւոր պահաւոր լրացած, գտնելով, անմիջապէս կրկին ձեռք առաւ ան ընտիր, լուրջ և հրահանգիչ բիւնները, զորս կրկար ասանէ ի վեր փաշինքու մէջ թողուլ ստիպուած էր, և այս պատճառաւ ալ ինքզինք տեղի ու անտեղի քննադատութեանց առարկայ ըրած ։

Հինգշաբթի իրիկուան թատերախաղը, ՄԱՐԻ ԺԱՆ, ընդհանուր գծերով բաւական յաջող ներկայացուցաւ ։ Խաղին հերոսներն էր Տիկին Յակոբեան, որուն քաղաքս վերադարձին անհամբեր կը սպասէր արդէն թատերասէր հասարակութիւնը ։ Արհիւր լեցուած էր ամբողջովին, տիկինը առաջին անգամ բեմին վրայ տեսնուելուն բուն ծափահարութեամբ ողջունուեցաւ ։ Վաւերացին տիկին Սիրանուշիկը տեսած ըլլալով հանգիւստ, ժամանակ մը գոհ եղած էր տիկին Գրանարով, որուն Պոլս մեկնելէն յետոյ, իբր ընդունակ գերաստիւններ, Տիկին Յակոբեան մը միայն մնաց իրեն, (Տիկին Ֆասուլեանեան ալ անշուշտ դեռ իր տեղը ունի իր տարիքին յարմար դերերու մէջ) ։ Այս պուկարահայ թատերասէրները իրենց թույլատրած ներթափան միջոցները կշռոյ առնելով բաւականացած են Տէր. Յակոբեանով ալ, որ իր հանգիստանալու բաւականասիրութիւնը գոհացնելու համար ամէն ջանք չէ խնայած ցարդ, և գերազանցած է բոլոր սկսնակները որ իր բացակայութեան միջոցին Վաւերացի հայ թատերասէրներ վրայ փայլել փորձելով աւելի առիթ տուած են հասարակութեան «տէր և Տիկին Յակոբեան» մրմնջելու ։

Տիկինը Տ. Պապանանի նման փորձ և ողբերգական դերասանի մը քով դեռ յառաջագիւնելու ասպարէզ ունի ։ Որով թէ՛ ինք կօպուտի, թէ խումբը, և թէ՛ պուկարահայ թատերասէր իր նշանակութիւնը կը վերստանայ ։

Պապանանի և Յակոբեանի անունը

ները յիշուած ատեն, փափկանկատութիւնը պարտք կը դնէ մեզ բոլորովին լուսթեամբ չանցնիլ Երամանի, Թաշմանի, Թէրդեանի անուններուն վերայէն, որոնք, եթէ իրենց ընտրած ասպարէզին մէջ յաջատու են, մեր բեմին զարգեբը պիտի ըլլան ։ Ժամանակ պարտեանը, որուն ընդունակութիւններուն վրայ կարծէ ծանրանալ ընդարձակ ուսումնասիրութեան մը առիթ ։

Իսկ կրտսերները ՀՃ. Յակոբի ջոթութեամբ գէթիք ծառածուկեանց մասին Բարեկենդանի շարժումն կը վերապահենք մեր շնորհաւորութիւնները ։

ԱԶԳԱՅԻՆ

ՍՕՅՈՒՅԵ Պատրիարքարան դըրուել է յիշ նորընտիր առաջնորդը պաշտօնատեղին փութացնելու պէտք կայ, որովհետեւ կառավարութեան կողմէ առաջնորդարանի ծախսեց գումար մը յատկացնել տալու համար, մինչև մէկ ամիս առաջնորդը հարկ եղած դիմումը ընելու է կըսեն, որպէս զի իշխանապետութեան ներկայ տարւոյ պիտեմէին մէջ այդ գումարը նշանակուի ։ ապա թէ ոչ յառաջիկայ տարւոյն կը մնայ ։

ԹԱՐԻՔԱՍՏԱՆԻ Սարգիս քաղաքին մէջ բնակող Հայերը 3000 լուպիի դիտին մը գնելով, քաղաքին կեդրոնը, եկեղեցիի մը շինութեան կը ձեռնարկեն ։ Այս ձեռնարկին օգնել խոստացած են թուրքաստանի ուրիշ քաղաքներուն մէջ բնակող Հայերն ալ ։

ՊԱՐՄԻԱՍՏԱՆԻ մէջ ռուսական լեզուն գրեթէ ընդհանրացած ըլլալով, վերջերս թէհրանի ռուս գեսպանատունը տեղւոյն Հայկազեան վարժարանի հոգաբարձութեան առաջարկել է ռուսերէնը պարտաւորիչ ընել, որովհետեւ առեւտրական տեսակետով կարելի կը նկատուի ։ Այդ նպատակով գեսպանատունը խոստա

ցել է տարեկան 120 ոսկի նպաստ տալ ։ Հոգաբարձութիւնը ունէ պատասխան չէ տուած ։ Դավրէթի Արամեան վարժարանը արդէն տարիներէ ի վեր ռուսերէնը պարտաւորիչ ըրած ըլլալով ի փոխարէն նպաստ մը կը ստանայ ռուս կառավարութենէն ։

ՀԱՅ ԲԺՇԿՈՒՂԻ ՄԸ ՏԵՔ, ՕՐ. Զարուհի Ս. Դավալեան, Պօսթի թերթի բժշկական Գօլէճէն այս տարի շրջանաւարտի փայտն վկայական մը ստանալով, իր հայրենիքը Ատարազար վերադարձած է ։

ԱՅՈՒՅԻՍԻ հայ կաթողիկ հոգեւոր վարչութեան կարգադրութեամբ տեղւոյն հայ կաթողիկ եկեղեցիներուն մէջ հոկտ. 26 ին գահաւանական մաղթանքներ կատարուել են հայտուեաց իշխան Կալիցինի կեանքը վտանգէ ազատելուն համար ։

Նոյնպէս Կովկասի Կրթական ընդհ. տեսուչը ի դիմաց Տիգրանի Գրութայի, Գարսի և ուրիշ քաղաքներու մէջ գոյութիւն ունեցող դպրոցներու ուսուցչաց և աշակերտաց՝ ուղերձ մը մատուցել է իշխան Կալիցինի, ասոր կեանքը յարձակման վտանգէն ազատած ըլլանուն առիթ ։

ԿՈՎԿԱՍԻ մէջ նորանոր ռուս գաղութներ հաստատուելու գործերը փութով յառաջ տանելու համար ի մօտոյ խորհրդակցութիւններ պիտի կատարուին այդ գործի գլուխ կեցող անձերէ համաժողով մը գումարելով ։ Փոխանակ մեծաւ մասամբ ամայի մնացած ներքին նահանգները գաղթականներով շէնցնելու, այն կողմերէն ռուսներ կը բերեն բազմամարդ Կովկասի բնիկ հայերը նեղելու նպատակաւ ։

ԷՉՄԻԱՅՆԻ կը գրեն. «Լուրեր են պատու մեղանում թէ Գեղարդի վանքի միաբան Դաւիթ վարդապետը եւ կարմիր վանքի վանահայր Գրիգոր Խ. վարդապետը սպանուած են ։ Առաջինի սպանման լուրը ճշգրտեցաւ իսկ երկրորդի մասին գեղ. (հոկտ 21) հաստատ տեղեկութիւն չեն ստացած ։

ԳՈՒԿՍԿԻԼԵՆԻ մէջ Յարութիւն ձէլալեան անուն 60 տարեկան անձ մը լուսթեամբ պատկուել է 12 տարեկան աղջկան մը հետ Տ. Ստեփան քհ. Մարմանի ձեռամբ ։ Պատրիարքարանը գործը քննութեան ենթարկած է. տեղւոյն թաղ. խորհուրդը պատկը անխաբար հռչակել խնդրած է ։

ԱՓԷՆԻՔԻ Տէր Խորեն քահանայն որ այս անգամ ալ մինչև Հնդկաստան հանգանակութեան երթալու համար ճամբայ ելած և Եգիպտոս արդիւնած էր, հրաժարեցուցուած է, և անոր տեղ Կրետէի Տ. Աւետիս քահանայն ղրկուած է Աթէնք ։

ԱՄՊԷԻՐԻ (Ռուսաստան) Հայոց եկեղեցիէն գոյութիւն ընդունելու գէթ բացուած դատին հայ փոխանորդը դատարանին առջեւ դատախազ կանգնած և 800 լուպի պահանջած է գողերէ, որոնց փաստաբանը առարկած է թէ 1903 յունիս 12ի օրէնքին համեմատ, առաջնորդարանը այդ իրաւունքը չունի, այլ ներքին գործիքը նախարարութեանը կիցնայ դատախազ կանգնել. բայց Հայոց փաստաբանը պատասխանել է թէ յիշուած օրէնքով եկեղեցայ ներքին սեփականութիւնը և երեք տէսիստին հողի տարածութեան վրայ գրտնուածները եկեղեցայ կը վերա

ԱՐՄԷՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ԶԻՒԼՅԻ...

Բ.

« Զը կըրցայ... ախ, չը կըրցայ ոտքի վրայ ելնել... Կուզէի այդ մարդա-հրէշներու վրայ նետուել, ահաւանորդս թողնել անոնց արեւոտ ձեռքերն ու խեղճ կինս ազատել ։

« ... Կինս արեւուն մէջ կը տապալակէր, երբ ևս մարտը վիճակէս սխալելով անգամ մըն ալ գէպի դուռը նայեցայ ։

« Ամբողջ չորս ժամ անցած էր...

« Յանկարծ դուռը բացուեցաւ ու երկու հոգի ներս մտան, որոնք գեղաշիններ էին ։

« Իտեա գեղացիներուս, ճիշ մը արձակեցի ու դարձեալ մարեցայ ։ Իսկ անոնք կապած էին վէրքս, փոխադրած էին տուն մը և կը հակէին վրաս ։

« Քանի մը ժամէն ետքը, սկսայ սչալերել ։ Աչքս բացի թէ չէ՛, առաջին հարցումս սա եղաւ ։ «Ուր են կինս ու զաւակներս...» ։

« — Աստուած գիտէ, Ռէս աղա՛, պատասխանեցին շուրջս գտնուողները ։

« Ալ ուրիշ առարկութիւն մը չըլի ։

« Շարաթէ մը վէրքս աղեկցաւ... բայց կառավարութիւնը իրեն ռճրագործ մը զիս բանտարկեց, որովհետեւ համարձակել էի քանի մը զաղաններ սպաննել ։

« Երեք տարի՛, ախ, երեք տարի բանտը մնացի՛ ռճրագործներու գարշելի առանձնարանին մէջ, թէեւ աղատուելու յոյս չըկար ինծի, բայց միջոց մը զըտայ ու խոյս տուի ։ Եւ ասիկա ամեն ատեն կրնայ պատահիլ, եթէ բանտապահները կաշառակերութեան վարժուած մարդիկ են ։ Ատանկներու համար պարտականութիւնը խղճի կոչում մը չէ՛, այլ ապրելու միջոց մը ։

« Գիշեր էր երբ բանտապահին հնարամտութեամբ զորս նետուեցայ բանտէն ու գէպի գեղս դիմեցի ։ Ծառի վաղելով կարելի էի, այնպէ՛ս որ երեք ժամուան հեռաւորութիւնը երկու ժամուան մէջ կատարել էի ։ Գեղին մօտ ընդարձակ ձոր մը կար, հոն ապաստան մը ըլի ինծի ու սպասեցի որ գեղացիներէս մին տեսնէի ։

« Կէս օրէն ետքը նայեցայ որ հովիւ մը գէպի իմ կողմս կը յառաջացուէր ոչխարները ։

« Անմիջապէս ճանչցայ զինքը ։ Հովիւ Սարոն էր ։

« Հիտեւարար, մօտեցայ իրեն ու հարցուցի ։

« — Սարո՛, գեղին մէջ ի՞նչ լուր կայ ։

« — Աստուած կրնայ որ լուր չունեմ, պատասխանեց Սարո՛ աչքերուս մէջ երկիւղալի նայուածք մը նետելով ։

« — Սյուր գեղէն չես իգար ։

« — Ձէ՛, Ռէս աղա՛, էրկու օր է՛ սարէն վար իջած չունեմ ։

« — Սղէ՛կ, Ախպէր Սարո՛, թո՛ղ ինծի ոչխարներդ ու գեղը գնա՛... կընդունի՞ս ։

« — Ինչի՞ համար ։

« — Հասկցի՛ր թէ կառավարութեան մարդ կա՞յ գեղին մէջ ։

(Շարունակելի)

Одговорникъ Н. Драгулевъ